Հավելված 4

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՓԱԹԵԹ
Մրցույթի կոդ /01-010/

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Ամսաթիվ՝ 01/12/2015 թ.

1. Դուք հրավիրվում եք մասնակցելու մրցույթին՝ ներկայացնելով Գնառաջարկ նախահաշվի ձևով.
2. Տեխնիկական բնութագիրը և պահանջվող քանակները, ինչպես նաև, սույն գնումների առանձնահատուկ պայմանները տրված են Հավելված 1-ում:
ԹԻՀԿ-ն սույն գնումն իրականացնում է «Աջակցություն Քաղաքացի դիտորդ նախաձեռնությանը» (Ֆինանսավորող՝ Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ-ի կողմից) ծրագրի շրջանակում:
3. Դուք կարող եք գնառաջարկ ներկայացնել սույն հրավերում նշված ցանկացած Լոտի համար[1] կամ ամբողջ տեսականու համար[2]՝ կախված ապրանքի կամ ծառայության տեսակից:
4. Ձեր գնառաջարկը պետք է ներկայացվի առանձին փակ և կնքված ծրարով, որի վրա պետք է հստակ նշված լինի՝ կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլ-փոստը, մրցույթի կոդը:
Գնառաջարկի փաթեթը պետք է ներառի հետևյալը.
- ✓ Տիտղոսաթերթ՝ Կազմակերպության վավերապայմաններով
- ✓ Գնառաջարկ
- ✓ Համապատասխան տեխնիկական կամ այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության.
- ✓ Պայմանագիր

5. Մատակարարի ընտրությունը իրականացվում է՝ հիմք ընդունելով ապրանքի կամ ծառայության Տեխնիկական բնութագրում նշված չափանիշներին համապատասխանելիությունը, տրամադրվող գինը, մատակարման ժամկետները և այլն :
6. Այն գնառաջարկները, որոնք Տեխնիկական բնութագրում նշված պարամետրերից ցածր պարամետրեր կառաջարկեն, կարող են մերժվել որպես տեխնիկական պայմաններին չհամապատասխանող:
7. Ձեր գնառաջարկի փաթեթը պետք է առձեռն ներկայացնել հետևյալ հասցեով.
«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռրուպցիոն կենտրոն» ՀԿ
8. ՀՀ, ք. Երևան 0019, Անտառային 164/1, մինչև դեկտեմբերի 3-ը, ժ. 19:00:
10. **Մատակարարման և կատարման այլ պայմաններ**.
- ✓ Գները սահմանելիս պետք է հաշվի առնել այն պայմանը, որ ապրանքները պետք է մատակարարվեն նշված մատակարարման վայր(եր)ը;
- ✓ Գները պետք է ներկայացվեն ՀՀ դրամով, ինչպես առանց ԱԱՀ-ի[3] ,այնպես էլ՝ ներառյալ ԱԱՀ-ը: Գները պետք է լինեն ամրագրված և ենթակա չեն որևէ փոփոխման Պայմանագրի իրականացման ընթացքում;
- ✓ Ապրանքների, ծառայությունների/աշխատանքների համար վճարումները իրականացվում են ապրանքների/ծառայությունների ձեռք բերումից հետո՝ մատակարարի բանկային հաշվին փոխանցման եղանակով: Մատակարարի պահանջով կարող է կատարվել կանխավճար, բայց ոչ ավելի, քան ապրանքների/ծառայությունների ձեռք բերման գումարի 50 տոկոսը՝ համապատասխան կանխավճարային հաշվի հիման վրա;
- ✓ ԵՐԱՇԽԻՔ. Մատակարարված ապրանքը պետք է ունենա շահագործման ժամկետի երաշխիք՝ մատակարարման պահից:

[1] Յուրաքանչյուր Լոտ կգնահատվի առանձին և պայմանագրեր կշնորհվեն առանձին՝ ամեն Լոտի ամբողջ տեսականու համար: Տեսականուց և քանակներից պակաս գնառաջարկները կմերժվեն:

[2] Գնառաջարկը կգնահատվի, և պայմանագիրը կշնորհվի ամբողջ տեսականու համար հաղթող կազմակերպությանը

[3] Ավելացված արժեքի հարկից ազատված լինելու դեպքում մատակարարին ներկայացվում է տեղեկանք:

Հավելված 4.1

ԱՊՐԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Անվանում /Description	Տեխնիկական բնութագրերը /Technical specification	Քանակը (հատ) Quantity (piece)
1.	Հյուրանոցային սենյակների պատվիրում	*Ստանդարտ երկտեղանոց սենյակ 100 անձանց համար /2 գիշեր/ դեկտեմբերի 5-ից 6-ը ներառյալ*	50

Փոխտնօրեն_____/անուն, ազգանուն/

/ստորագրություն/

Կ.Տ.